

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՆԵՎԱՆԻ 903թ.
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայերեն վիճական արձանագրությունները հարուստ նյութեր են պարունակում միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքի լուսաբանման համար: Նրանցում հիշատակված պատմական դեպքերի ու դեմքերի, իրավական և առևտրական գործարքների միջոցով կարելի է որոշակի պատկերացում կազմել այս կամ այն ժամանակաշրջանին բնորոշ դրսևորումների մասին:

Հայտնի է որ արձանագրություններն իրենց բնույթով լինում են շինարարական, նվիրատվական, հիշատակագրային և կանոնական: Հիշատակագրային արձանագրությունները հավաստի տեղեկություններ են հաղորդում հանգուցյալի, նրա հարազատների, հաճախ նաև տապանաքարը կամ խաչքարը կերտող վարպետի մասին: Կանոնական արձանագրությունները ստույգ վկայություններ են պարունակում աստվածաշնչային դրույթների կամ վանքին, եկեղեցիներին վիճակներ հատկացնելու մասին, ընդ որում, դրանք հաճախ ուղեկցվում են կրոնաբարոյական բանաձևերով և սրբերի, մարգարեների ու առաքյալների հիշատակությամբ:

Պատմագիտական առումով առավել մեծ արժեք են ներկայացնում շինարարական, նվիրատվական արձանագրությունները: Սակայն շինարարական ծավալուն վկայագրերից շատերը չեն պահպանվել: Իբրև կանոն՝ այդ բնույթի արձանագրությունները հանդես են գալիս հիշատակագրային և նվիրատվական բնագրերի հետ համատեղ, որտեղ հիշատակվում է կառույցի առարկան /վանք, եկեղեցի, մատուռ և այլն/, պատվիրատուն, նրա հարազատները, շնորհված տիրույթները, սակավ դեպքերում կառուցող վարպետը /վարդպետը/, ապա թվարկվում են նվիրատվությունները և դրանց դիմաց ստացված պատարագները կախված թերևս նվիրատվության չափից: Որպես կանոն, վերջում հետևում է անձնի բանաձևը, թեև որոշ դեպքերում այն բացակայում է: Այդպիսի արձանագրություններից է Վանեվանի մեզ հետաքրքրող բնագիրը, որ փորագրված է Ս. Գրիգոր եկեղեցու զմբեթի թմբուկի հյուսիս-արևմտյան և արևմտյան կողերին: Այն բաղկացած է հետևյալ 20 տողերից.

ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ՇԱՊՈՒՄԻ ԲԱԳՐԱՏՈՒՄԻ, ՀԱՅՈՑ ՄՊԱՐԱՊԵՏ, ՏԵՐԱՆՑ |

ՏՐ. ՈՐՈՒՄ ԱՇՈՏԻ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՌՈՐԻ, Ի ԺԱՄԱՆԱԿԱ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՌՈՐԻ ՄԵԼԾԻ ՍԵԼՊԱՏԱՅ, ՀԱՐԱՉԱՏ ԵՂԲԱՌ ԻՍՈՅ, ԵՒ ՎԵՐԱԴԻՏՈՂԻ ՀԱՅՈՑ | ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԵՒՆԻՍԻ, ԻՄԱՑԱՅ ԵՒ ՇԱՆԵԱՅ ԹԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՓՈՒՌ ԵՒ ՄԵԾՈՒ | ԹԻՆ ԸՄՊԱՌԵԼՈՑ ԵՆ ԵՒ ՎԱՂԻ ԿՈՐԵԼՉԵԼՈՑ, ԵՒ ՄԵԾԱՓԱՓԱԳ ՏԵԼՉԱՆՈՎԵ | ՎԵՐԱԿԱՑՈՒ ԵՒ ՏԵՍՈՒՉ ԱՌՆԵԼՈՎ ԶԵՂՈՐ ԻՄ ՄԱՐԻԱՄ, ՍԻՆԵԱՑ ՏԻԿԻՆ ՅԻՐԻ | -ԻՄ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ, Ի ՎԱՆԵՎԱՆԻ ՎԱՆԱ, ՏՈՒՆ ԱՅ. ՎԱՆԳԱՆԵԼ ՎԻՄԱՏԱՇՄ | ԿՈՓԱԾՈՎԵ, ՇԱՏԱԾԱՆ ԳԱՆՉԻԲԵ ԵՒ ՄԵԾԱՑԱՆ ՎԱՏԱԿՈՎԵ ՎԱՏԱՐԵԼ | ԹԵՐԵԻՄ ԼԻԳԻ ԻՆՉ ՈՂՈՐՍՈՒԹԻՒՆ ՅԱՅՆՄ ԱՌՈՐՆ ՅՈՐԺԱՄ ԲԱՆՔՆ ՄՊԱՌ | ԻՆ ԵՒ ԳՈՐԾԵ ԹԱԳԱՌՈՐԵՆ: ԵՒ ՏՈՒՄԵ Ի ՔԵԶ ՎԱՆԱՎԱՆՈՒ ՎԱՆԱՎԱՆ ՀԱ | ՅՐ ԱԲՐԱՀԱՄ ԱՂԱՌԹԵԼ ԵՒ ՎԱՅԵԼԵԼ ԵՒ ՈՐ ԱՅԼ ՀԵՏ ՔՈ ԱՅԼ ՅԱԶՈՐԴԻՆ | ԵՒ ՊԱՇՏԱՒԵԱՅՔ ԽՈՐԱՆԻՂ ՅՈՐԺԱՄ ԺՈՂՈՎԻԵ ՄԻԱԲԱՆ ՅԱՂԱՌԹԱՍ | ԵՒ ՎԵՐԱԿՐԻԵ ԱՆԱՄԱՅԱՆ ԿԵՐԱԿՐՈՅՆ ՀԻՇԵԱԶԻԵ ԶԻՄ ԵՒ ԶԻՍԱՆ, ԶԻ ԱՐԱՄԱԵ ՈՂՈՐՍՈՒԹԻՒՆ ՈՂՈՐԱՎԾ ԱԾ: :Դ: ԳԵՂՈ ՍԱՀԱՆ ԿՈԹԱԵՐ, ՇԱԲԱՆԱՀՈՒՆ, ԳԵՏԱՄԵՅՆ, ԿԹԱՆՈՑ, ԳԵՏԱՎԱՆԱՑ ԾՈՎԱՆ: ՄԿ: (260) ԴՐԱՄ, Ի ԿՈԹԱԵՐ: ՇԼ: (530) Ի ԲՈՏԵԼԵԳՆ :ՈՎ: (660) ՅԱՂԻԲՈՂԱՆԱՑ : ՋԴ: (990), Ի ԿԱՐԲԻՆ ԳԵ | ՏԵՐԵՆ ԵՒ ՆԱԵՐԵՆ: ՏՐ ԱԲԻՍՈՂՈՄ. ՏՐ ԱԹԱՆԱՄ: Ի ԹՈՒՆ ՀԱՅՈ: ՅԾԲ: (903): ԱՄՊԱՆ ԹԱԳԱՌՈՐ ԱՍՏ ԱՍՏ | ՈՒԾՈՎ ԲԵՐԱՒ ԶՈՒՐ ՅՈՆՈՐ... ԵՆ | ԱՑ, ԴԱԽԹ ԶԵՆԱԲԵ ԵՒ ՄԻԱԲԱՆԱՒ | Զ, ԶՈՐ ՅԱՌԱՋ ԲԵՐԱԾ ԵՐ, ԱԾ ՈՂՈՐՍԻ (1, էջ 121-122):

«Արծանագրության վերջին, ջուր բերելուն վերաբերող մասը հավելում է. գրված է անփույթ, տառերի սղումներով և միացումներով. բայց և ոչ շատ ուշ առաջինից, իր բովանդակությամբ այն կարելի է ազատ համարել առաջինից» (1, էջ 122):

Իրոք այս հատվածը, ինչպես նաև «ՏՐ ԱԲԻՍՈՂՈՄ, ՏՐ ԱԹԱՆԱՄ» անունները բացակայում են Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» մատյանում: Պատմիչը դրանց փոխարեն ավելացրել է անեծքի բանաձևը. «Որում մի ոք իշխեսցէ հակառակել: Եւ թէ յանդգնի ոք յ318 հայրապետացն նգովեալ եղիցի և մասն և բաժին գՅուդային առցէ. ի թուիս Հայոց 352 /3ԾԲ/» (9, էջ 182):

Ստեփանոս Օրբելյանն այն եզակի պատմիչներից է, որ իբրև սկզբնաղբյուր օգտագործել է վիմագրերը, սակայն, ինչպես նկատում է Գ.Գրիգորյանը, բովանդակությունը չխաթարող «աննշան խմբագրական շտկումներով» (4, էջ 211):

Օրինակ՝ քնագրի «:Դ: գեղո սահման Կոթաքար, Շաւառնահողն, Գետամէջն, Կթանոց, Գետավանաց ծովն» շարքում Ստեփանոս Օրբելյանը Կոթաքարից հետո ավելացրել է «Աղաբոյ վանան», այսինքն թվարկել է «հինգ: գեղոց սահման» (14, էջ 181):

Ըստ երևույթին, Աղաբոյ վանքը պատմիչի մետրոպոլիտության շրջանում է ներառվել Վանեվանի վիճակի մեջ: Մենք հակված չենք կարծելու, թե

խնդրո առարկա տեղանունը արձանագրությունը սխալ վերծանելու հետևանք է:

Թվարկված այս գյուղերից հայտնի է Կթանոցը, որը Վանեվանն է /39 Գեղարքունիքի մարզի Մարտունու ենթաշրջանի Արծվանիստը/: Իբրև բնակավայր այն հիշատակվում է մենաստանի շինարարության հանգամանքների կապակցությամբ, (14, էջ 181) ինչպես նաև Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցանկում 7 չափ հարկով (14, էջ 514): Հարկաչափի միավորից կարելի է կռահել, որ Կթանոցը եղել է փոքր գյուղ:

Շավառնահողմ-այն է թերևս հիշատակված Արծվանիստ գյուղից դեպի հարավ գտնվող սահմանախաչի արձանագրության մեջ՝ Շաւառւովնով ձևով, ինչպես ենթադրում է Ս.Բարխուդարյանը (1, էջ 126):

Սահմանախաչը կանգնեցվել է Շավառնահողմ և Անմեռ գյուղերի սահմանաբաժան վայրում:

Արձանագրության մեջ հիշատակված մյուս տեղանունները պարզելու համար մեծ ջանքեր են գործադրել նախորդ ուսումնասիրողները: Օրինակ, Մեսրոպ Սմբատյանցը Կոթաքարը նույնացնում է Կոթ գյուղաքաղաքի հետ: Նա գրում է. «... մինչև ներքին Ադինաման գիւղն որ ի հնումն Կոթ գիւղաքաղաք կամ Կոթաքար» (7, էջ 432): Նույն ժամանակաշրջանի /851-901թթ./ (14, էջ 181) մի այլ արձանագրության մեջ, որը փորագրված է եղել Սաքենյաց վանքի արևելյան և արևմտյան պատերին (1, էջ 290-291), Սյունյաց Գրիգոր Սուփան իշխանը վանքին նվիրել է «:Մ:/200/ դրամ ի Կաթկայ» (1, էջ 290) ուրեմն Կոթը պատկանում էր նրան, և Շապուհ Բագրատունին ինքնիշխանի իրավունքով միայն կարող էր Կոթաքարից ստացվող շահույթի որոշակի մասը հատկացնել Վանեվանին: Որ Կոթը Սյունյաց Գրիգոր Սուփան 2-րդի ժառանգական սեփականությունն է եղել, հավաստվում է նաև Կոթա ս. Աստվածածնի շինարարական արձանագրությամբ. «...քաղաքագիւղս Կոթա ի կալուածի իմոց նախնեացն...» (1, էջ 266): Սմբատյանցը չի նշում օգտագործած աղբյուրները, ինչի հիման վրա կարելի կլիներ հանգել նման եզրակացության:

Տեղագիրը արձանագրության վերջին մասը այլ կերպ է վերծանել Գետավանաց ծովն տեղանունից առաջ ավելացնելով ի նախդիրը. «ի Գետավանաց ծովէն :Մ4: դրամ» (7, էջ 963) հետևաբար «ի Կոթաքարէն» կապակցությունը մնում է անավարտ: Բացի դրանից նա Շավառնահողմ վերծանել է Շաւարնահողմ (7, էջ 563), ըստ երևույթին մտածելով, որ դա բարդ բառ է՝ վերջին հող բաղադրիչով:

Վանեվանի խնդրո առարկա արձանագրությունը վերծանել և հրատարակել են նաև Շահխաթունյանցը և Զալալյանցը: Առաջինը գրում է, որ անծամբ

ընդօրինակելով արձանագրությունը՝ համեմատել է Ստեփանոս Օրբելյանի ընթերցվածի հետ և գտել «զանազանութիւն ի միջի մանաւանդ ի կալուածսն նուիրանաց», ուստի առաջարկում է իր վերծանությունը (8, էջ 251): Սակայն ինքը ևս թույլ է տվել որոշ աղավաղումներ և բացթողումներ: Արձանագրության վերջին մասում 15-րդ տողից «:Դ: Գեղո սահման» կապակցությունից հետո ավելացրել է ըստմբ բառը, որ 17-րդ տողի առաջին բառն է /տառնց ք տառի/: Բնագրից նա հանել է «Կոթաքառ, Շավառնահուն, Գետամեջն, Կթանոց, Գետավանագ ծովն ՄԿ:» բառաշարքն, այսինքն 16-րդ տողը, որն, ըստ երևույթին, կարդալու ժամանակ սարդել է աչքից:

Ջալալյանցը ևս արձանագրության սկիզբը ճիշտ է ընդօրինակել, թեև վերջին մասում նույնպես թույլ է տվել աղավաղումներ: 11-րդ տողում նա առողոռն բառը վերծանել է առաջնողոռն, 15-րդում Շավառնահուն Շաւար-նուն, Կթանոց, Գետավանագ ծովն Կրանոց գետ, Անանայ ծովն, իսկ ՄԿ թվականը կարդացել է Մ գրելով երկու հարիր. մնացած թվերը մեջբերում է ստույգ կերպով՝ ԸԼ, ՈԿ, ՁԴ (12, էջ 120):

Շապուհ Բագրատունու այս արձանագրությունը մանրամասն ծանոթագրություններով ներկայացնում է նաև Ղևոնդ Ալիշանը (6, էջ 60): Մեծանուն հայագետը օգտվել է Շահխաթունյանցի վերծանությունից, բայց ծանոթ է եղել նաև Ջալալյանցի ընդօրինակությանը: Ուստի դրանք համեմատելով Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» մեջ գետեղված բնագրի հետ՝ գտնում է, որ կավածներ շնորհիվ մասը Ջալալյանցի մոտ «ընդօրինակեալ է աղաւաղանօք» և վկայակոչում է պատմիչի «սակաւ ինչ երկարագոյն եւս բանիւք» արտահայտությունը. «Եւ ետու հինգ գեղոց սահման. Կոթաքարն, աղաբոյվանսն, Շավառնահուն, Գետամեջն, Կթանոցն, Գետավանագ ծովն, ՄԿ դրամ ի Կարբին գետերն և նաւերն...»: Նա արձանագրությանը կցել է նաև դրան հաջորդող տողը. «Աստ կան ի շիրմի աստուածագգեաց տէր Սողոմոն և տէր Աթանաս, Սմբատ Բագրատունի» (6, էջ 61):

Ալիշանը, անդրադառնալով արձանագրության բնագրում նշված տեղանուններին, փորձում է տալ դրանց տեղադրությունը, բայց դա նրան այնքան էլ չի հաջողվել, որովհետև բացի Կթանոցից և Շավառնահուլից, մատենագրական և վիճագրական աղբյուրներում մյուսները չեն հիշատակվում: Նա տարբերում է Ստորին Ալուչալու և Ստորին Կթանոց գյուղերը և Կոթաքարը տեղադրում է մերջին Ալուչալուի տեղը. «Երեք Ալիչալու գեղոք են... Ստորին թուկ կոչեցեալ ի հնումն Կոթաքար գիւղ, որ ընդ այլոց չորից տուաւ ի կալուած Վանեվանայ...» (6, էջ 60), իսկ Ստորին Կթանոցի մասին գրում է. «...այլ հռչակավոր քան զայս էր Ստորին Կթանոցն, որ է բուն Վանեվան գյուղ, մղոնաւ

եւ եթ հեռի ի ծովէն յարեւ մտյան գետեզոն...» (6, էջ 60): Բայց իրականում
 Ներքին Ակուշալուն հենց Կթանոցն է, որը, ինչպէս արդեն ասել ենք,
 հավաստում է Ստեփանոս Օրբելյանը (14, էջ 181): Բացի դրանից Ալիշանը,
 հետեւելով Ջալալյանցին, Ներքին Ակուշալուից դեպի հարավ մոտ հինգ կիլո-
 մետր հեռավորությամբ գտնվող Խարաբա կամ Խըրբեք (1, էջ 120) գյուղա-
 տեղում տեղադրում է Վերին Կթանոցը, իսկ այդտեղի մենաստանը համարում
 Ստեփանոս Օրբելյանի հիշատակած «միւս Վանեվանը» (6, էջ 60): Այս կարծիքն
 ընդունելի է համարում նաև Ս. Բարխուդարյանը (1, էջ 121), որ գոյություն է
 ունեցել 2 Կթանոց, հավաստվում է նաև Արատեսի վանքի 1301թվականի
 արձանագրությամբ և «Ջամբոի» վկայությամբ: Ըստ այդ արձանագրության
 Ստեփանոս արքեպիսկոպոսն (պատմիչ) իր «սեփական փիճակէն ի Գեղար-
 քունոյ զգեոն Վանեվան, զԿիտանոցն...» (2, էջ 126) նվիրաբերում է վանքին,
 իսկ «Ջամբոի» հեղինակը Սիմեոն կաթողիկոս Երևանցին Սաբենյաց վանքի
 հարկատու գյուղերի մասին գրում է, որ «Ունի զվիճակ ի Գեղարգունոյ նահիէն,
 ի կողմն Արեգունոյ... զԿետանոց, զՎանեվան...» (13, էջ 283): Երկու դեպքում էլ
 Վանեվանը և Կթանոցը հիշատակվում են որպէս առանձին գյուղեր, հետևաբար,
 բացի մեզ հայտնի Վանեվան-Կթանոցից, գոյություն ունեն ճակ մեկ ուրիշ
 Կթանոց: Ինչ վերաբերում է հիշատակված մյուս տեղանուններին, ապա
 Ալիշանը Գետավանաց ծովն ու Աղաբովանացն ծովն լըստ արձանագրության
 յԱշիբողանակի համարում է, որ «իցեն թերևս լճակք փոքունք ի գլուխ յորոյն» (6,
 էջ 63): Առաջինը, իրոք, կարելի է լճակ համարել: Երբ համեմատում ենք
 բնագիրը և Օրբելյանի վերծանությունը, նկատում ենք մի հետաքրքիր փաստ
 արձանագրության մեջ թվարկվում է հինգ տեղանուն Կոթաքար, Շավառնա-
 հուն, Գետամէն, Կթանոց, Գետավանագ ծովն, բայց նշվում է «Դ գեղո սահ-
 ման»: Օրբելյանի մոտ ևս գյուղերի ցանկից դուրս է մնում մի տեղանուն Կոթա-
 քարն, Աղաբոյ վանսն, Շաւառնահուն, Գետամէն, Կթանոցն, Գետավանագ
 ծովն, բայց «հինգ գեղոյ սահման»: Երկու դեպքում էլ անուշադրության
 պատճառով միևնույն սխալը թույլ տալ չէր կարող: Անում է հանգել այն
 եզրակացության, որ թվարկածներից մեկը գյուղ չէ, իսկ Գետավանագ ծով-ի
 երկրորդ բաղադրիչը մեզ հիմք է տալիս համաձայնել Ալիշանի ենթադրությանը
 և Գետավանագ ծովո համարել լճակ: Երկրորդ դեպքում դժվարանում ենք
յԱշիբողանագ-ի լըստ Օրբելյանի և Ալիշանի, յԱշիբոյ վանագն ծով էլ
 վերաբերյալ որևէ կարծիք հայտնել, քանի որ պատմիչը մեկ գոում է Առաբոյ
վանսն, մերթ յԱղաբոյ վանագն ծովէ: Մնում է կիսել Ալիշանի ենթադրությունը
 հավելելով, որ կար նաև գյուղ նույն անվամբ: Ա.Աբրահամյանը յԱռաբողանագի
 ծագումը կապում է աշիբողանսի հետ. «Կարելի է ենթադրել, գրում է նա, որ

աղաբոշոն բառը «կրոնավորի վերնագգեստ» իմաստով /հունարենից է: Այդպիսի անվանումով հավանաբար դրամ է նախատեսվել եկեղեցական պաշտոնյաների զգեստների համար» (14, էջ 460): Կարծում ենք Օրբելյանի նման քաջատեղյակ անձը, որը հրաշալի գիտեր կրոնի և եկեղեցու պատմությունը, հոգևոր օջախների օգտին զանազակող տուրքերի մասին, անշուշտ, կանդորադառնար նման հարկի գոյությանը:

Արձանագրությունը հրապարակել է նաև Լալայանը: Ցավոք, նա նույնպես թույլ է տվել որոշ տարրնթեցումներ, կատարել խմբագրական անհարկի շտկումներ /ամենայն-ամ, յիւրում-յիմում, Կոթաքար-Կոթայ քարն, անմահական-յանմահական և այլն (5, էջ 52):

Այս արձանագրությանը անդրադարձել է նաև Ա.Հակոբյանը: Նա գրում է, թե իբր Շապուհ Բագրատունին, ի թիվս այլ հասութաբեր հաստատությունների, վանքին է նվիրել նաև յոթ ձկնորսարան (11, էջ 60): Սակայն բնագրի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այնտեղ ձկնորսարանների մասին խոսք չկա:

Այժմ արձանագրություններում հիշատակվող անձերի մասին համառոտ:

Շապուհ Բագրատունի - Աշոտ 1-ին Բագրատունի թագավորի կրտսեր որդին է, Հայաստանի սպարապետն ու իշխանաց իշխանը: Մահացել Սմբատ 1-ինի օրոք մինչև 914թ.: Նա նաև կրում էր «տերանց տեր» տիտղոսը: Ըստ Ռ.Մաթևոսյանի «տերանց տերը» թագավորի հրամանով կարգավորում էր Բագրատունի և մյուս գահերեցների | այսինքն՝ Սյունիքի, Վասպուրականի և մյուս «տերերի»| փոխհարաբերությունները հայոց թագավորի հետ (10, էջ 103):

Աշոտ- Աշոտ 1-ին Բագրատունի թագավորն է: Բագրատունիների հարստության հիմնադիրը: Ծնվել է 819թ., 855թ. դարձել է հայոց սպարապետ: Մահմադ-Ջաբր ամիրապետից 858թ. ստացել է իշխանաց իշխանի տիտղոս, իսկ Ալ-Մութաուաբիլ Ալ-Աբբասի խալիֆը 861թ. նրան նշանակել է Արմինիայի (Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի) կառավարիչ: 886թ. թագադրվել է Հայոց թագավոր: Մահացել է 890 /91թվականներին:

Սմաատ /Սմբատ- Աշոտ 1-ինի ավագ որդի Սմբատ 1-ին Բագրատունի թագավորն է: Գահ է բարձրացել 891թ. և իշխել է մինչև 914 թվականը: Ամբողջ կյանքն անց է կացրել արտաքին ու ներքին պատերազմներում: Նվաճել է Դվինը և երկրի այն բոլոր տարածքները, որոնք մահմեդականների ձեռքն էին անցել: Երբջում ստիպված է եղել անձնատուր լինել Ատրպատականի ամիրա

Յուսուֆ իբն արու Սաջ Դեվդադին, բայց չուրանալով հավատը՝ 914թ նահատակվեց:

Յեւահս /Յովհաննէս/ - Հայոց կաթողիկոս Յովհաննէս Դրասխանակերտցի-պատմիչն է, աթոռակալել է 898-929թթ.:

Մարիամ, Սիւնեաց տիկին- Աշոտ 1-ին Բագրատունու դուստրը, Սմբատ 1-ին թագաւորի և Շապուի Բագրատունի սպարապետի քույրը, Սյունյաց մեծ իշխան Վասակ Գաբուռի կինը, Գրիգոր Սուփան 2-րդի, Սահակի և Վասակի մայրը: Կառուցել է Սևանի և այլ եկեղեցիներ: Հալածվելով Յուսուֆ ամիրայից պանդխտել է Գարդմանում և ալյուր, մահացել է 911թ:

Հայր Աթոհիամ-եղել է վանքի վանահայրը:

Տեո Ածստոռն, տեո Աթանաս- արծանագրութիւնուն գործարքի վավերացման ժամանակ հանդես են եկել որպէս վկաներ: Հավանաբար, սրանք վանքի հեղինակավոր միաբաններից են:

Արծանագրութեան «վիտուն իշխանութեան» կապակցութիւնը ցույց է տալիս, որ լճափնայ այդ տիրութենքը, ընդ որում Վանեվանը, պատկանել է Մարիամ իշխանուհուն, այսինքն՝ կազմել է Սյունյաց գահերեցութեան [Գեղարքունիքի ճյուղի] անջակտելի մասը:

Այժմ փորձենք մեկնաբանել նվիրագրում գործածված «դրամ», ի «գետեռն» և «նաւեռն» բառերի իմաստները:

Միջնադարյան Հայաստանում «դրամ» եզրույթը կարող էր նշանակել և ոսկի, և՛ արծաթ փող /հազվադեպ նաև պղնձե/, սակայն ավելի հաճախ կիրառվել է երկրորդ իմաստով: Ոսկե դրամը վիմագիր և ձեռագիր աղբյուրներում, չնչին բացառությամբ, անվանվում է դեկան կամ դահեկան (3, էջ 91), որն իր արժեքով հավասարվում էր տասը սպիտակի /արծաթի/:

Խնդրո առարկա բնագրում «դրամ» եզրույթը ենթադրում է արծաթե փող՝ սպիտակ: Համոզվելու համար բերենք մի քանի օրինակներ, որտեղ նույն արժեքներն արտահայտված են թե՛ դրամ և թե՛ սպիտակ նշանակությամբ: Այսպես 1312թ. Գրիգոր Ղուփյան իշխանը «ՌՇ: /1500/ սպիտակ-ով այգիներ է գնում և նվիրում Նորավանքին, որի դիմաց ստանում է վեց պատարագ (2, էջ 239), նույն ժամանակաշրջանում Խաչաշահի դուստր Խաթունը «:Յ: /300/ սպիտակ»-ով այգի է ձեռք բերում Արփայում և ընծայում վանքին, որի համար ընդունում 2 պատարագ (2, էջ 223), Լուսերեսը նվիրաբերում է սբ. Աստվածածնին «:Մ: /200/ սպիտակ» և փոխարենը տեր դառնում 2 պատարագի (3, էջ 126), իսկ ըստ Անիի 1058թ. արծանագրութեան՝ Գրիգորը «:Ն: /400/ դրամ ընծայաբերում է սբ. Առաքելոցին պատվիրելով 3 պատարագ (15, էջ 13) արժողությամբ ավետարանը»:

Այս օրինակներում դրամ և սպիտակ եզրույթներով արտահայտված են միևնույն արժեքները՝ ժամ-պատարագները, որոշակի տարբերություններով, ըստ Թ.Ավդալբեկյանի «Հայաստանում ուշ միջնադարի /և ոչ միայն ուշ միջնադարի-Լ.Ս./ ժամ-պատարագներն ունեցել են իրենց սակագինը: ...ժամ-պատարագների միջին սակագինը 20-25 դահեկան է կամ 200-250 դրամ սակագնի տատանման սահմաններն են՝ ցածից 5 դահեկան ու բարձրից 75 դահեկան...» (16, էջ 33):

Գետեղէն բառը այստեղ կարող է նշանակել ջրանցքներ, քանի որ արհեստականորեն հանված ջուրը կազմում էր ինչպես ավատատերերի, այնպես էլ վանքերի սեփականությունը: Բնական վիճակում եղած ջրերը /վտակ, աղբյուր, անծրաջուր, գետ/, ըստ Գ.Գրիգորյանի, դեռևս մասնավոր սեփականություն չէին համարվում, և թերևս ամբողջ երկիրն ու նրա ընդերքը պատկանում էին թագավորին: Ուրեմն, այն կարծիքը, թե ջուրը նույնիսկ բնական վիճակում առանձին ավատատերերի և վանքերի մասնավոր սեփականությունն է եղել, համոզիչ չէ (17, էջ 114):

Ինչ վերաբերում է Ի Կարբին նաւեղէն... կապակցությանը, ապա պետք է նկատել, որ Ղևոնդ Ալիշանը Կարբին տեղադրում է Սևանի ափին (6, էջ 63): Նույն հարցի առիթով՝ Ա.Աբրահամյանը գրում է. «Եթե խոսքը վերաբերում է պատմական Կարբի գյուղին [այժմ Աշտարակի շրջանում], ապա այնտեղ նավեր լինել յնրա մերձակա ծորով անցնող Քասախ գետը նավարկելի չէ՝ չէին կարող: Այստեղ նաւ բառը մեկ այլ իմաստով է գործածված՝ «ծառի հաստ բնից պատրաստված խողովակածև հարմարանք, որի միջով ջուրն ուղղվում է ջրաղացի թափանիվի վրա և պտտեցնում այն»: Այս իմաստով, բառն այսօր էլ դեռ կենդանի է մեր շատ խոսվածքներում [տեղ-տեղ նով ձևով]: Իսկ դա էլ փոխաբերաբար կարող էր նշանակել «ջրաղաց», այսինքն վանքի համար եկամուտ է սահմանվել ջրաղացներից (14, էջ 461):

Նկատենք, որ Բագրատունիների տիրույթների սահմանների մեջ մտնող ոչ մի նավարկելի գետ չկար: Որ «նաւեր» բառն ավելի շուտ երկրորդ՝ բարբառային իմաստով է գործածված, գալիս են համոզելու նաև Գանձասարի վանքի երեք արձանագրությունները, որոնցում այդ բառը կիրառված է «նով» ձևով: Առաջին երկուսում հանդես է գալիս հատուկ անվան իմաստով հող բառի հետ՝ «...տվեց նովերին հող» և «Վերին նավերին հող» որպես նվիրաբերվող առարկաներ: Երրորդ վիճագրում հստակ երևում է նով բառի իմաստային աղերսը ջրաղացի հետ: Բերենք մի հատված այդ արձանագրությունից. «Յուսովն Այ ես Ղեսում, որդի Սիսաքին, ամուսին իմ Մամա միաբանեցաք սր

ուխտիս եւ տվաք սք. Գերգիա ի մեր հայրենեց նովս: շ...ածերածու սք Գերգ ի մեր տնաջաղաց իւր ժամ...» (18, էջ 5, 16, 58, 28):

Նշենք, որ Ա.Յակոբյանը նաեւ բառը բացատրում է որպէս առագաստանավեր (11, էջ 70):

Այժմ գատորոշենք արձանագրության բնույթը: Մինչև այժմ բոլոր ուսումնասիրողները, որոնք այս կամ այն առիթով անդրադարձել են Շապուի Բագրատունու բննարկվող բնագրին, այն համարել են շինարարական-նվիրատվական, քանի որ վանքի շինարարությունից զատ, Վանեվանին նվիրաբերվել են նաև չորս գյուղեր Կորաքար, Շաւառնահողը, Գետամէջն, Կթանոց: Սակայն արձանագրությունն ունի նաև կանոնական բնույթ, որովհետև Շապուի Բագրատունին այդ չորս գյուղերը հաստատել է որպէս Վանեվանի հոգևոր վիճակ, քանի որ ինչպես նկատում է Գ.Գրիգորյանը. «Վանքերին նվիրաբերված գյուղերն ու կալվածները, որպէս կանոն, ազատվում էին արքունիքին և տեղական ֆեոդալներին տրվող հարկերից և այլևս հարկադրման չէին ենթարկվում: ... Այդ նշանակում է, որ նվիրատուները հրաժարվում էին իրենց օգտին զանձվող հարկերից ու տուրքերից՝ հօգուտ նոր տերերի: Այսպիսով, արքունիքին կամ առանձին ֆեոդալին պատկանած գյուղը հարկադրվում էր կրոնավորների կողմից, այսինքն հարկահավաքման, ինչպէս նաև տերերի համար կատարվող պարտավորություններից օգտվելու մենաշնորհը, հավանաբար նույն սկզբունքներով, անցնում էր հոգևոր հաստատությունների ղեկավարությանը» (4, էջ 84): Դետաքար, Շապուի Բագրատունին, եթե նվիրում էր այդ գյուղերը, «:ՄԿ: դրամ ի Կորաքար» չէր հատկացնի նույն վանքին: Մենք ուշադրությամբ ուսումնասիրել ենք «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի բոլոր հրատարակված պրակների նվիրատվական արձանագրությունները և չենք հանդիպել մի ընծայագրի, որտեղ գործածվի «ետու սահման» արտահայտությունը: Այդ նվիրագրերում միշտ նշվում է. «եւ ետու... ի ժառանգութիւն», «եւ ետուն նուէրս», «ետու ընծա», «միաբանեցաք... եւ տվաք» (2, էջ 14, 50, 76, 78): Կարող է նշվել, որ գյուղը տրվում է «ամենայն սահմանաւք» (2, էջ 206), բայց ոչ մի դեպքում «գեղո սահման»:

Վերը շարադրվածից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Ստեփանոս Օրբելյանը խմբագրել է արձանագրությունը և գյուղերի ցանկում ավելացրել Աղաբոյ վանսն:
2. Արձանագրությունում հիշատակված գյուղերից հայտնի են Վանեվանը և Շավառնահողը, մյուսների տեղադրությունը չի հաջողվել պարզել:
3. «Գետերեն և Նաւերեն» արտահայտությունը ենթադրում է ոչ թե գետեր կամ նավեր, այլ ջրանցքներ կամ ձեռակերտ առուներ ու ջրաղացներ:

4. Շապուհի Բագրատունու արծանագրությունը ոչ միայն շինարարական-
նվիրատվական, այլ նաև կանոնական-իրավական բնույթի է:

1. «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, էր. 1973
2. «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ա.Գ. Բաթխուշայան, էր. 1967
3. «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, կազմեցին Ա.Ա. Ավագյան, Հ.Մ. Ջանիկոսյան, էր. 1977
4. Գ.Գրիգորյան, Սյունիք Օրբելյանների գյուղ, էր. 1981
5. Ե.Կալուխան, Նալ-Բալազանի գյուղում, համառոտ փոխհր. Վանե վանքի փոխ, Ազգագրական հանդես, XXIV գիրք, Թիֆլիս, 1913
6. Ղ.Ալիևան, Սյունիան, Վեհապետի, 1893
7. Մ.Ամբաստյանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովագործ գավառի, Վարդապետ, 1986
8. Յուլի. Կախարանեանց, Ստորագրություն կապակիչ էջերների և ինքն գավառացի
Արարատույ, հ. 2, էջերների, 1842
9. Պատմություն հասանգին Սյունիան, արտերալ Ստեփաննով Օրբելյան Արևելյանպետի
Սյունեաց, Թիֆլիս, 1910
10. Ռ. Մարտիրոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կրթաքաղաքական և վարչաբարձրական կապ, էր.
1990
11. Ա. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. 1, էր. 1957
12. Ս. Ջուլուխանց, Ժամանակագրություն ի Մեծ Հայաստան, Մուսն Բ, Տիֆլիս, 1858
13. Սյունիան Կապակիս, Ջամբու, Վարդապետ, 1873
14. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, աշխատություններ Ա.Աբրահամյանի, Երևան, 1986
15. «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Հ. Օրբելի, էր. 1966
16. Թ. Ավարյան, Մի գավառի հայ վիմագրության մեջ, էր. 1927
17. Գ. Գրիգորյան, Սյունիքի փոխական կապակիսներ, էր. 1973
18. «Դիվան հայ վիմագրության», պրակ V, կազմեց Ա.Գ. Բաթխուշայան, էր. 1982
19. Ա. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն հ. 2, էր. 1967